Պ. Գրիգոր Մամուլեանց քարեայ մկրտութեան աւազան . . 70
Պ. Սողոմոն Գարեծելեանց սեննեկաց լուսամուտների երկաթը . . 40
Պ. Եագոր Ռոտինեանց գմբեթի խաչը . 20
Հանգուցեալ Եօվանէ Նազարեանց մի մեծ ջահ 30
Պ. Գրիգոր Չայգեշտեան մի հատ շուրջառ 15
Քաղաքի մշակներից 200 անձինք գործեցին և վարձը նուիրեցին . . 100
Խուրաների (սղոցողների) համք. ընծայեցին սեննակների համար 70 տախտակ 50
Պ. Ամիրխան Ամիրխանեանցը պարսպի դռները , . . 70
Գերան կրողները (տօփչիք) ընծայեցին 60 գերան . . . 150
Բաղաղների համքարը 6 հատ ժամաշապիկ 12
Մխիթառ Կիրիլէն (Վրացի) իւր եզներովը կրեց 60 գերանը. . . 30
Պ. Եագոր Մեղլինեանցը մի հատ բուրվառ . . . 5
Պղնձագործների համքարը պղնձեղէն ու խտաւորաց համար . . . 20
Դարբինների համքարը ընծայեց 6 փութ բևեռ (մեխ). . - 20
Պ. Արտեմ Վարդանեանցը մի զոյգ քշոց 15
Պ. Միքայէլ Վարդանեանցը մի վարագոյր 40
Պ. Աղան Շարիմանեանցը մի զոյգ վարագոյր մասանց խորանում . . 25
Պ. Գրիգոր Տէր Սարգսեանցը սկիհ ոսկեզօծ . . . 70
Հանգուցեալ Մխակ Մեսրոպեանց մի վարագոյր . , . 50
ևս Բաժակաման , , 15

Ընդ ամէնը 5458
Զուտ գումար 5070

Բոլորի գումարը 10528

ՇԱՔԱՐ ՌՈՒՄԻԿԵԱՆՑ

1872 ամ. 15 Դեկտեմբ.
Ի Տփխիս։

---

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԾԽ. ՀՈԳ. ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ.

## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ Հոգևոր Դպրոցաց առաքելով ընդ սմին զհամառօտ հաշուեցուցակ մուից ու ծախուց Դպրոցաց ի 1872 ամի, զննուանական ցուցակ բարերար երկսեռ Անդամոց և զցուցակ թուոյ Ուսումնարանաց՝ Ուսուցչաց՝ Վերակացուաց և Ուսանողաց Հայոց Աստրախան քաղաքի, խոնարհաբար խնդրէ հրատարակել յընդհանուր տեղեկութիւն մերազնէից, տպագրութեամբ յէջս Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձուք

Յովսէփ Աւագ. Քահանայ Բուծիաթեանց
Գ. Սողոմոնեանց
Սարգիս Բուրջալեան
Յովհաննէս Սարգսեանց
Սիմէօն Պօպովեանց.

Յ 2. Յունվարի 1873 ամի
յԱստրախան.

Մուտք.

| | Ր | Կ |
|---|---|---|
| Մնացորդք ի 1871 ամէ. | | |
| Մի բիլէթ թագաւորական բանկի $5_0\|^0$ գումարու. . | 1000 | |
| Մի բիլէթ Վաճառ. բանկի $6_0\|^0$ գումարու. . | 1000 | |
| Չորս հատ բիլէթ թագաւորական բանկի $5_0\|^0$ գումարու. . | 550 | |
| Եօթն սեռի բիլէթք, գումարու. | 350 | |
| Պատրաստական դրամք. . | 34 | $3^1/_4$ |
| | 2934 | $3^1/_4$ |

Մուտք 1872 ամի.

| | | |
|---|---|---|
| Դրամք հանեալք յարդեանց երկուց եկեղեցեաց Աստրախանայ. . | 1622 | |

Դրամք հանեալք ի տոկոսեաց գումարաց Հայազգի աղքատաց Աստրախանայ. . . 400

Նուիրագրամք Յօհաննու Գէորգեան Պարոն Ֆռանգուլեանց. 15

Գանձանակագրամք ժողովեալք յեկեղեցիս Աստրախանայ. . 171 76

Նուիրագրամք զանազան անձանց . 37 18

Դրամք վաճառեալ գրեանց. . 71

Տուրք ուսման երկսեռ աշակերտաց. 122

Նուիրագրամք Գեր. Սրբազան Առաջնորդին Աստրախանայ ի նպաստ պահպանութեան Օրիորդական Դպրոցի. . . 100

Նուիրագրամք երկսեռ բարերար Անդամոց. . 180

Նուիրագրամք Հոգաբարձուի Սիմէօնի Մարտիրոսեան Պօպովայ. . 20

Նուիրագրամք Ազնուականի Յովակիմայ Յովհաննէսեան Արգարեանց. 15

Տոկոսիք բիլէթաց ի դպրոցապատկան գումարաց. , 642 62

Տոկոսիք կտակաւանդ գումարի Բուրխառդեան ստացեալք ի Փասյեանէ 100

Կտակաւանդ դրամ՝ Մկրտչի Մալխասեան Քուրդեանց. . 100

Արդիւնք կրպակաց Թովմայի Յովհաննէսեան. . 100

Դրամք վիճակախաղութեան. . 40

3736--56

Գումար 6670 59 1/4

## Ծ-խ+ է 1872 -մ.

Ի տարեկան վարձ համայն ուսուցչաց և վերակացուաց երկսեռ դպրոցաց. . . 2571 28

Ի տարեկան վարձ պահապանաց. 300

Ի տարեկան վարձ ժամագործի. 24

Ի գին տարեկան փայտի և ջրոյ. 135 75

Ի գին դասական մատենից. . 91 75

Ի վարձ կազմարարի. 11 60

Ի վարձատրութիւն ուսուցչի Լևխանեանց. . . 25

Ի գին զանազան նիւթոց ի պէտս դպրոցաց. . . 177 66

Ի գին կոշկաց վասն աղքատ երկսեռ աշակերտաց. . 54

Ի վճար պահպանութեան բիլէթաց ի գանձատան բանկի. . 1 86

Գումար 3392 89

Ըստ այսմ գծախս հանեալ ի բաց՝ մնան առ 1873 թուականն բիլէթ Թագաւորական բանկի 5% գումարաւ հազար րուբլի, բիլէթ Վաճառական բանկի 6% տուեալ յ2 Սեպտեմբերի 1872 ամի № 2017, գումարաւ հազար րուբլի, չորս հատ 5% բիլէթ Թագաւորական բանկի գումարաւ 550 րուբլի, եօթն հատ սերի բիլէթ գումարաւ երեք հարիւր յիսուն րուբլի և պատրաստական դրամք երեք հարիւր եօթանասուն եօթն րուբլի եօթանասուն և մի քառորդ կոպէկ՝ ընդ ամենն 3277 րուբլի 70 1/4 կոպէկ արծաթ.

### ԱՆՈՒԱՆՔ ԲԱՐԵՐԱՐ ԵՐԿՍԵՌ ԱՆԴԱՄՈՑ Ի 1872 ԱՄԻ.

Յովհաննէս Գրիգորեան Սարգսեանց.
Կարապետ Զաքարեան Գալստեանց.
Գրիգոր Կարապետեան Պօպովեանց.
Մովսէս Յովսէփեան Ղորղանեանց.
Յովակիմ Յովհաննէսեան Արգարեանց.
Կատարինէ Գրիգորեան Թէլէթեանց.
Յուստինէ Գրիգորեան Մասումեանց.
Կատարինէ Յարութիւնեան Կոստնցեանց.
Հռիփսիմէ Գաբրիէլեան Կազազեանց.
Մագդաղինէ Ահարոնեան Ֆաբրիկանթեանց.
Կատարինէ Յովհաննէսեան Ֆռանգուլեանց.
Ովսաննա Փիլիպպոսեան Յովհաննէսեանց.
Մարգարիտ Գէորգեան Մատաթեանց.
Կատարինէ Յակոբեան Կազազեանց.
Հռիփսիմէ Գրիգորեան Հախվէրտեանց.
Մանուշակ Սիմէօնեան Արգարեանց.
Հռիփսիմէ Յովակիմեան Նեմցեանց.
Մարիամ Յովհաննէսեան Պօպովեանց.
Ծաղիկ Յակովբեան Պօպովեանց.
Եղիսաբէթ Կարապետեան Սարգսեանց.
Եղիսաբէթ Անդրիասեան Ֆռանգիւլեանց.

Եղիսաբէթ Զաքարեան Աղաբաբյեանց․
Մարիամ Միքայէլեան Աստուրեանց․

### ՑՈՒՑԱԿ

Թուոյ ուսումնարանաց, Ուսուցչաց, Վերակացուաց և Ուսանողաց Հայոց Աստրախան քաղաքէ վասն 1872 ամի․

| ԱՆՈՒԱՆՔ ԴՊՐՈՑԱՑ․ | Թիւ Ուսուցչապետաց․ | Թիւ Ուսուցչաց․ | Թիւ Վերակացուաց․ | Թիւ ուսանողաց․ Թօշակաւորաց․ | Թիւ ուսանողաց․ Ձրիավարժից | Թիւ ուսանողաց․ Ը[illegible]աց․ | Ընդ ամէնն․ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծխական Հոգևոր արական Դպրոց ի սրահի Ս. Աստուածածնի Աւագ Եկեղեցւոյ. | 1 | 2 | 1 | 7 | 12 | 12 | 31 |
| Ծխական Հոգևոր արական Դպրոց յանուն Ս. Գէորգայ քաջամարտիկ զօրավարի կառուցեալ ի սրահի Ս. Կատարինէ կուսի Եկեղեցւոյ. | 1 | 2 | | 2 | 3 | 15 | 20 |
| Հոգևոր Օրիորդական Դպրոց, զետեղեալ ի տան Նուիրեալ ի 1870 ամի հինգ ամ ժամանակաւ ի Գեբազնիւ Գրիգորէ Կարապետեան Պօպովեանց. | 1 | 3 | 1 | 2 | 5 | 46 | 53 |
| Երկրորդ դասատուն ծխական Հոգևոր արական դպրոցաց. | | 6 | | 2 | 1 | 13 | 16 |
| Երկրորդ դասատուն Հոգևոր Օրիորդական Դպրոցի | | 5 | | 4 | 1 | 9 | 14 |
| Ընդ ամէնն. | 3 | 18 | 2 | 17 | 22 | 95 | 134 |

## ԱԳՔԻՐՄԱՆԷ.

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Պատուական ամսագրոյդ Օգոստոսի թուահամարին մէջ յօդուած մի կարդացինք այս վերնագրով. «Համառօտ տեսութիւն Խրիմու և Պեսարաբիոյ քանի մի քաղաքաց հոգևոր ծխական դպրոցաց ներկայ դրութեանը»: Այդ յօդուածին մէջ պարոնին մէկը (որոյ անունը դեռ յայտնի չէ հասարակաց, բայց իրեն ով և ինչպիսի անձ լինիլը քաջ յայտնի է մեզի) Ագքիրմանի մանկանց և օրիորդաց դպրոցներուն վերայ խօսելու ժամանակ այնպիսի սուտեր և այնպիսի յանդուգն դատողութիւններ կընէ՝ որ բոլոր յօդուածը արժանի կը տեսնուի ըսուելու ոչ թէ համեստ տե-սակէտէն, այլ ծուռ և կէտ-ոտ դիտողու-թեան, վասն զի գուոզ պատգամախօսի, մանաւանդ թէ անիրաւ . . . մը ձևով՝ կյարձակի նա մեր վրայ, և մեր ու մեր ազգատոհմին անուանն ու պատուոյն վնաս բերող խմստներ կգործածէ, չկարենալով յիշել անգամ՝ թէ իր այդպիսի աններելի զրպարտական վարմունքովը կարող է դիւրաւ ոչ միայն հոգևորական՝ հապա նաև աշխարհական դատաստանի տակ ձգուիլ: Եւ թէպէտ այդ պարոնը արժանի չէ պատասխանի ինչպէս որ ամէն զինքը գիտցողներն ալ կվկայեն, բայց որովհետև «Արարատ» ամսագիրը արժան համարեր է պատուել անոր գրուածքը, — գուցէ կարծելով թէ ճշմարտութիւն ալ կգտնուի ըսածներուն մէջ, — և ամսագրոյդ բարեմիտ ընթերցողները ևս առաւել կրնան խաբուիլ այն պարոնին ստութիւններէն, հարկ համարեցանք համառօտիւ հերքել այստեղ անոր ըրած զրպարտութիւններուն գլխաւորները:

Եւ նախ՝ չենք գիտեր թէ այդ պարոնը որո՞վ իրաւամբ կամ ի՞նչ իշխանութեամբ ամբողջ քաղաքի մը ժողովրդեան քանի՛ անգամ ընտրած և զանազան Գերապատիւ Առաջնորդներուն հաստատած հոգաբարձուացը վրայ կյարձակի յանդգնաբար, և յանուանէ մեզի դէմ խօսելով կգրէ՝ թէ «իրեն հայրենասէր պարտք մը համարած է խզբաննէ անոր շինութեան դպրոցին անոր բոլոր զարմացան և անշարժ կալուածները էր չէ ... մէջ ... կարգաւ ... » . . . վարժապետներ կարգել դպրոցին մէջ, և թէ ... հրամայածին պէտ փոխել զանոնք. . . որով չէր ... նթէ ասեմ, տարի նոր՝ վարժապետ